ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ 8/11.4

2014թ. հունիսի 25-ի թիվ 8 նիստի

ԿԱՆԱԴԱՅԻ ՄԱՆԻՏՈԲԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊՐՈՖԵՍՈՐ, PHYSICA E: LOW-DIMENSIONAL SYSTEMS AND NANOSTRUCTURES ԱՄՍԱԳՐԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ ՏԱՊԱՇ ՉԱԿՐԱԲՈՐՏԻԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 6-րդ ենթակետով և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 6-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Գիտության և կրթության ոլորտում նշանակալի ձեռքբերումների, Մանիտոբայի համալսարանի և Երևանի պետական համալսարանի միջև գիտական կապերի խորացման գործում ունեցած նշանակալի ներդրման և ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի զարգացմանը ցուցաբերած մեծ աջակցության համար Կանադայի Մանիտոբայի համալսարանի ֆիզիկայի և աստղագիտության բաժանմունքի պրոֆեսոր, Physica E: Low-dimensional systems and nanostructures ամսագրի հիմնադիր եվ գլխավոր խմբագիր Տապաշ Չակրաբորտիին շնորհել Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ